

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2010 թվականի N - Ն

**ԲՐԵՆԴԻԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Խաղողի հունքով ոգելից խմիչքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել «Արբուն» բառը, որպես բրենդիի ապրանքային անվանում:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 5 տարիների ընթացքում թույլատրել արտադրանքի մակնշվածքում «Բրենդի» և «Արբուն» ապրանքային անվանումների գուլգահեռ գործածությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

**«Բրենդիի համար առանձին ապրանքային անվանում սահմանելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի
ընդունման անհրաժեշտության վերաբերյալ**

«Բրենդիի համար առանձին ապրանքային անվանում սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքի (15.07.2008թ. ՀՕ-135-Ն) 46-րդ հոդվածի 6-րդ մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի N 778-Ա որոշմամբ հաստատված «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի» 8-րդ կետի պահանջով:

«Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքով հայկական կոնյակը և հայկական բրենդին նույնականացվել են (դրանք Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում մշակվող խաղողի որոշակի սորտերի գինեյուրներից թորված սպիրտներից ստացված խմիչքներն են, որոնք շշավցվում են Հայաստանի Հանրապետությունում):

Բացի այդ, ըստ վերը նշված օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի, կարող է արտադրվել բրենդի՝ մինչև 40% ներկրված սպիրտի պարունակությամբ:

Նշված օրենքի պահանջով հայկական կոնյակը (հայկական բրենդին) բրենդիից տարբերելու և սպառողներին թյուրիմացության մեջ չզգցելու նպատակով ՀՀ կառավարությունը պետք է բրենդիի համար սահմանի առանձին ապրանքային անվանում: Որպես այդպիսին առաջարկվում է «Արբուն» -ը:

Միաժամանակ «Արբուն»-ի հետ քննարկման է ներկայացվում նաև «Արբեն», «Արբենի», «Բարկոն» և «Գինեակ» անվանման տարբերակները կամ խնդրվում է առաջարկել այլ անվանում, որը պետք է լինի հնարավորինս բարեհունչ ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն և այլ լեզուներով:

Սույն որոշման նախագծի ընդունմամբ բրենդին կունենա այլ ապրանքային անվանում, որը մի քանի տարի բրենդի մակնշման հետ զուգահեռ օգտագործվելով կտարածվի և ճանաչում ձեռք կբերի: